Զօրական մասի պետական պաշտօնեաների ռոճիկի, օրապահիկի, բնակարանի, վառելիքի և լոյսի վճարի մասին։— 1) *Սպաների ռոճիկը սոյն թուի հոկտեմբերի 1-ից սահմանել ամսական ներկայ օրէնքին կցած տախտակի համաձայն։*

2) *Զօրապարտ և կամավարձու պաշտօնեաների ռոճիկը սոյն թ. հոկտեմբերի 1-ից սահմանել ամսական համաձայն քաղաքացիական մասի պաշտօնեաներին վերաբերող՝ 1919թ. դեկտեմ. 17-ի օրէնքին կցած տախտակի։*

Զօրական բժիշկներին բացի դրանից տալ նաև առանձին ռոճիկ՝ սոյն օրէնքին կցած տախտակի Բ. և Գ. սիւնեակների համաձայն, սակայն այնպէս, որ ստանալիք ռոճկի ընդհանուր գումարը համապատասխան դասի պաշտօնի սպայի ռոճկից աւելի չլինի։

3) *Զօրական մասի պաշտօնեաներին տրւում է զինւորական բաժին։ Զօրապարտ և կամավարձու պաշտօնեաների ռոճկից հանւում է իրենց ստացած զինւորական բաժնի արժէքը։*

4) *Քաղաքացիական մասի պաշտօնեաներին վերաբերող սոյն թուի դեկտեմբերի 17-ի օրէնքի, 2,4 և 5-րդ յօդւածները տարածել զօրական մասի պաշտօնեաների վերա։*

(Հաստատուած է 1919թ. դեկտ. 29-ին)